

Ժուռնալիստներու Տամ մէջ մամուլի մերկայացուցիչներու հետ տեսակցութիւն մը տեղի ունեցաւ որում հրաւիրուած էին մասն. Գերշ. Տ. Տ. խաժակ եւ Յովմամ Եպիսկոպոսները: Հարցազրոյցին բացումը կատարեց Պր. Յակոբ Աւետիքեան: Թղթակիցները գնահատեցին Հայաստանեայց Եկեղեցւոյ տածած առաջնակարգ հոգատարութիւնը սփիւռքի հայապահպանութեամբ սրբազան գործին մէջ եւ գնահատեցին Երուսաղէմի դերը եւ ամոր կարելութիւնը Հայ Եկեղեցական կեանքին մէջ: Նոյն երեկոյին, Սրբազան հայրը մասնակցեցաւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմէ հրաւիրուած 60 Հայրեմի մտաւորականներու հետ խորհրդակցութեամբ, որոնք զանազան հարցերու շուրջ կարծիքներու փոխանակութիւն ունեցան: Այս համոզիպումը գրեթէ չորս ժամ տևեց:

Յաջորդ առաւօտ Սրբազան Հայրը արդէն կը պատրաստուէր վերադարձի: Մայր Տամարի մէջ իր կարմ աղօթքը ըմբլէ ետք Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարքը հրաժեշտ կու տար Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ կ'ուղղուէր Զուարթնոցի օդամակայան:

Յաջորդ երեք օրերը կ'ամցնէր Փարիզի մէջ: Համգիստ շաբաթ մըն էր Սրբազան Հօր համար, որու ընթացքին Սրբազան Հայրը առիթը ունեցաւ ակամատես ըլլալու Հէմրի Վերմոնթի « Մայրիկ » գիրքի վրայ հիմնուած կիմոժապաւեմի մկարահանմամբ, որ Մեծ Եղեռնի օրերէն Հայ դժբախտ ըմտամիքի մը պատմութիւնն է:

Պատրիարք Հայրը Երուսաղէմ վերադարձաւ Կիրակի, 24 Մարտի երեկոյեան:

Յ Ա Ի Ը

Մարդուն ամէկութեան ձայնը Աստուծոյ հասաւ

« Տէր վերցուր ցաւը -

Ըստուերն մթնցմող քու ստեղծած աշխարհն.

Գալարուն շղթան սիրտը հեղձուցող,

Սաւառնիլ ուզող թելերուն վրայ՝

Բեռն ծանրացող:

Տէր վերցուր ցաւն քու ստեղծած աշխարհէն

Որպէս զի ամ՝ քեզ աւելի սիրէ:

Պատասխանեց Տէրն այդ աղաղակին.

Վերցնեմ ցաւը

Ն ամոր հետ ոյժը տոկունութեան մարդուն հոգիին՝

Ճիգով գորացած:

Վերցնե՞մ գութը՝ սիրտ-սրտի հիւսող -

Վսեմ Զոհողութեան

Կ'ուզէք մոռնալ ողջ ձեր հերոսները,

Բոցերուն մէջէն, ներակ յօմքերով, երկնքին մայրը:

Վերցնե՞մ սէրը - Գիմ փրկագործման,

Ժպիտով ամոր կորուստն ընդունող:

Կրնա՞ք ձեզմէ տալ զայն որ կ'փարի իմն -

Քրիստոսը խաչին վրայ:

Ամանուն

Հիմ հեղինակէ մը

Թարգմանեց Մ. Մանուկեան